ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆՄԱԱՊՁԲ-19/25

ք. Երևան «14» 06 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի լիազորությունները կատարող՝ Ս. Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և <<Զանգակ-97>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ս. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու որպես կանխավճար ապրանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում Կատարողին վճարել որպես կանխավճար վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Կատարողը իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 267993840 (երկու հարյուր վաթսունյոթ միլիոն ինը հարյուր իննսուներեք հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.2 Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին վճարել կանխավճար պայմանագրի գնի 100% չափով համաձայն N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի:

3.3 Պատվիրատուն կանխավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Կանխավճարի մարումն իրականացվում է ծառայության մատուցման ավարտից հետո՝ հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հետ են գանձվում Կատարողին որպես կանխավճար փոխանցված գումարից:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | <<Զանգակ-97>> ՍՊԸ |
| Ք. Երևան, Կառավարական տուն 2 | ք. Երևան, Կոմիտասի պող. 49/2 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան |
| Հ/Հ 900011005130 | Հ/Հ 217001040013001 |
| ՀՎՀՀ 02512868 | ՀՎՀՀ 00830786 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| ------------------------ Ս. Մուրադյան | -------------------------- Ս. Մկրտչյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | «Մաթեմատիկա 1», 2-րդ մաս | 97» ՍՊԸ, ՀՀ | հեղ.՝ Ս.Մկրտչյան, Ս.Իսկանդարյան, Ա.Աբրահամյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրքը նախատեսվում է առաջին դասարանի երկրորդ կիսամյակի համար: Դասագրքում պետք է ուսումնասիրվեն երկրորդ տասնյակի թվերը՝ 10-ից մինչև 20, սովորողներին պետք է տրվի պատկերացում երկնիշ թվերի, դրանց կազմության, կլոր թվերի, ինչպես նաև երկարության, ժամանակի, զանգվածի, տարողության և մի քանի կարևոր չափման միավորների՝ դեցիմետրի (սանտիմետրին աշակերտներն արդեն ծանոթացել են առաջին կիսամյակում), ժամի, կիլոգրամի, լիտրի մասին: Բացի այդ՝ երեխաները պետք է յուրացնեն թվաբանական կարևորագույն գործողությունները՝ գումարումը և հանումը (20-ի սահմաններում), խնդիրը, խնդրի պայմանը, խնդրի հարցը (հարցադրում), սովորեն լուծել, ինչպես նաև՝ կազմել պարզ խնդիրներ: Դասագրքում նույնպես պետք է լինեն գունեղ, տպավորիչ պատկերազարդումներ: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները պետք է նպատակային լինեն, համադրված տեքստին: Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի տրամաբանությանն ու ստեղծագործական միտքը զարգացնող առաջադրանքներին: Անհրաժեշտ է բովանդակության ցանկի առկայությունը: Նյութի ծավալը պետք է համապատասխան լինի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Շարադրանքը պետք է լինի մատչելի:<br>Տեխնիկական չափանիշները<br>Էջերի քանակը՝ 96<br>Չափսը՝ 24X17 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2<br>Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | | | | | օգոստոսի 20-ը |
| 3 | 22111110-16 | Դասագիրք «Մաթեմատիկա 2», 1-ին մաս | «Զանգակ-97» ՍՊԸ, ՀՀ | «Մաթեմատիկա 2» 1-ին մաս՝ 2-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ս.Մկրտչյան, Ս.Իսկանդարյան, Ա.Աբրահամյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրքը նախատեսվում է երկրորդ դասարանի առաջին կիսամյակի համար: Դասագրքի բովանդակությունը, որն իր մեջ ներառում է 2 հիմնական թեմաներ /«Երկնիշ թվեր» և «Եռանիշ թվեր»/ պետք է, համապատասխան լինի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Պետք է համապատասխան լինի սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին, պետք է նպաստի առաջին դասարանում ձեռքբերած գիտելիքների ամրապնդմանը, հմտությունների զար- | հատ | 20360 | 790 | 16084400 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | «Մաթեմատիկա 1», 2-րդ մաս | 97» ՍՊԸ, ՀՀ | հեղ.՝ Ս.Մկրտչյան, Ս.Իսկանդարյան, Ա.Աբրահամյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրքը նախատեսվում է առաջին դասարանի երկրորդ կիսամյակի համար: Դասագրքում պետք է ուսումնասիրվեն երկրորդ տասնյակի թվերը՝ 10-ից մինչև 20, սովորողներին պետք է տրվի պատկերացում երկնիշ թվերի, դրանց կազմության, կլոր թվերի, ինչպես նաև երկարության, ժամանակի, զանգվածի, տարողության և մի քանի կարևոր չափման միավորների՝ դեցիմետրի (սանտիմետրին աշակերտներն արդեն ծանոթացել են առաջին կիսամյակում), ժամի, կիլոգրամի, լիտրի մասին: Բացի այդ՝ երեխաները պետք է յուրացնեն թվաբանական կարևորագույն գործողությունները՝ գումարումը և հանումը (20-ի սահմաններում), խնդիրը, խնդրի պայմանը, խնդրի հարցը (հարցադրում), սովորեն լուծել, ինչպես նաև՝ կազմել պարզ խնդիրներ: Դասագրքում նույնպես պետք է լինեն գունեղ, տպավորիչ պատկերազարդումներ: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները պետք է նպատակային լինեն, համադրված տեքստին: Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի տրամաբանությանն ու ստեղծագործական միտքը զարգացնող առաջադրանքներին: Անհրաժեշտ է բովանդակության ցանկի առկայությունը: Նյութի ծավալը պետք է համապատասխան լինի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Շարադրանքը պետք է լինի մատչելի:<br>Տեխնիկական չափանիշները<br>Էջերի քանակը՝ 96<br>Չափսը՝ 24X17 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2<br>Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | | | | | օգոստոսի 20-ը |
| 3 | 22111110-16 | Դասագիրք «Մաթեմատիկա 2», 1-ին մաս | «Զանգակ-97» ՍՊԸ, ՀՀ | «Մաթեմատիկա 2» 1-ին մաս՝ 2-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ս.Մկրտչյան, Ս.Իսկանդարյան, Ա.Աբրահամյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրքը նախատեսվում է երկրորդ դասարանի առաջին կիսամյակի համար: Դասագրքի բովանդակությունը, որն իր մեջ ներառում է 2 հիմնական թեմաներ /«Երկնիշ թվեր» և «Եռանիշ թվեր»/ պետք է, համապատասխան լինի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Պետք է համապատասխան լինի սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին, պետք է նպաստի առաջին դասարանում ձեռքբերած գիտելիքների ամրապնդմանը, հմտությունների զար- | հատ | 20360 | 790 | 16084400 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | գացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Դասագրքի շարադրանքը պետք է լինի յուրացման համար մատչելի: Պատկերազարդումը պետք է ունենա գեղագիտական բարձր որակ և համապատասխանի սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Շարունակությունն է առաջին դասարանի երկրորդ կիսամյակի համար նախատեսված դասագրքի և հիմք է նախապատրաստում ինչպես երկրորդ դասարանի երկրորդ կիսամյակի, այնպես էլ տարրական մյուս դասարանների մաթեմատիկայի լիարժեք ուսուցման համար:<br>Տեխնիկական չափանիշները<br>Էջերի քանակը՝ 88<br>Չափսը՝ 24X17 սմ<br>Գույն՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2<br>Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | | | | | |
| 4 | 22111110-18 | Դասագիրք «Մաթեմատիկա 2», 2-րդ մաս | «Զանգակ-97» ՍՊԸ, ՀՀ | «Մաթեմատիկա 2» 2-րդ մաս՝ 2-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ս. Մկրտչյան, Ս. Իսկանդարյան, Ա.Աբրահամյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրք հանրակրթական դպրոցի երկրորդ դասարանի երկրորդ կիսամյակի համար: Դասագիրքը պետք է պարունակի մեկ խոշոր բաժին՝ «Բազմապատկում և բաժանում», որը, ըստ առարկայական ծրագրի, ներառում է այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնակ. գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները պետք է ներկայացված լինեն պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները պետք է հնարավորություն ընձեռեն կազմակերպել ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիք. առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Շարադրանքը պետք է լինի մատչելի, անհրաժեշտ է միջառարկայական կապերի ապահովվածությունը: Դասագրքում ներառված նյութը պետք է սովորողներին տա հնարավորություն հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Անհրաժեշտ է, որ | հատ | 20360 | 860 | 17509600 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | բովանդակությունը տրոհված լինի թեմաների, և առկա լինի բովանդակության ցանկը: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, պետք է համադրված լինեն տեքստին և մեկնաբանված: Առաջադրանքներն ու պատկերազարդումները պետք է ներառեն սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Դասագիրքը պետք է ավարտվի «ամբողջ տարվա ուսումնասիրված թեմաների «Կրկնությամբ»: Շարունակությունն է երկրորդ դասարանի առաջին կիսամյակի համար նախատեսված դասագրքի և հիմք է նախապատրաստում տարրական մյուս դասարանների մաթեմատիկայի լիարժեք ուսուցման համար:<br>Տեխնիկական չափանիշները<br>Էջերի քանակը՝ 96<br>Չափսը՝ 24X17սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2<br>Կազմը՝ ֆոլթբորդ 270 գ/մ2<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | | | | | |
| 5 | 22111110-39 | Դասագիրք «Մաթեմատիկա 4», 1-ին մաս | «Զանգակ-97» ՍՊԸ, ՀՀ | «Մաթեմատիկա 4» 1-ին մաս՝ 4-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ս. Մկրտչյան, Ս. Իսկանդարյան, Ա. Աբրահամյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրք հանրակրթական դպրոցի չորրորդ դասարանի առաջին կիսամյակի համար: Պետք է համապատասխանի «Մաթեմատիկա» առարկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկի չորրորդ դասարանի առաջին կիսամյակի համար նախատեսված ծրագրային նյութը: Դասագիրքը պետք է սկսվի նախորդ տարվա ուսումնասիրված թեմաների «Կրկնությունից» և պետք է պարունակի մեկ խոշոր բաժին՝ «Գործողություններ բնական թվերի հետ», որը, ըստ առարկայական ծրագրի, ներառում է այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Անհրաժեշտ է, որ նյութի ծավալը համապատասխան լինի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները պետք է ներկայացվեն պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն ընձեռեն կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Շարադրանքը պետք է մատչելի լինի, ապահովված տեսական և գործնական նյութերի համամասնությամբ, ինչպես նաև՝ միջառարկայական կապերով: Անհրաժեշտ է բովանդակության տրոհումը թեմաների և ցանկի առկայությունը: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները պետք է լինեն նպատակային՝ տեքստին | հատ | 21604 | 860 | 18579440 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | համադրված: Շարունակությունն է երրորդ դասարանի դասագրքի և հիմք է նախապատրաստում չորրորդ դասարանի երկրորդ կիսամյակում մաթեմատիկայի լիարժեք ուսուցման համար:<br>Տեխնիկական չափանիշները<br>Էջերի քանակը՝ 96<br>Չափսը՝ 24X17 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2<br>Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | | | | | |
| 6 | 22111110-41 | Դասագիրք «Մաթեմատիկա 4», 2-րդ մաս | «Զանգակ-97» ՍՊԸ, ՀՀ | «Մաթեմատիկա 4» 2-րդ մաս՝ 4-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ս. Մկրտչյան, Ս. Իսկանդարյան, Ա. Աբրահամյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրք հանրակրթական դպրոցի չորրորդ դասարանի երկրորդ կիսամյակի համար: Այն պետք է համապատասխանի մաթեմատիկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկի չորրորդ դասարանի երկրորդ կիսամյակի համար նախատեսված ծրագրային նյութը: Դասագիրքը պարունակում է մեկ խոշոր բաժին՝ «Կոտորակներ», որը, ըստ առարկայական ծրագրի, ներառում է այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները ներկայացված են պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Դասագիրքն ավարտվում է «Լրացուցիչ առաջադրանքներով» և ամբողջ տարվա ուսումնասիրված թեմաների «Կրկնությամբ»: Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Անհրաժեշտ է ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքների, տրամաբանական խնդիրների առկայությունը, ամփոփիչ հարցեր: Անհրաժեշտ է բովանդակության տրոհումը թեմաների և ցանկի առկայությունը: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները պետք է լինեն նպատակային՝ տեքստին համադրված: Շարունակությունն է չորրորդ դասարանի առաջին կիսամյակի դասագրքի և հիմք է նախապատրաստում հինգերորդ և վեցերորդ դասարանների մաթեմատիկայի լիարժեք ուսուցման համար:<br>Տեխնիկական չափանիշները<br>Էջերի քանակը՝ 88<br>Չափսը՝ 24X17սմ | հատ | 21604 | 790 | 17067160 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2<br>Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | | | | | |
| 7 | 22111110-10 | «Կերպարվեստ 1» /աշխատանքային տետր/ | «Զանգակ-97» ՍՊԸ, ՀՀ | «Կերպարվեստ 1»՝ 1-ին դասարանի աշխատանքային տետր,<br>հեղ.՝ Լեմս Ներսիսյան, Ելենա Գյուլմիսարյան<br><u>Բովանդակային չափանիշներ</u><br>Աշխատանքային տետրը նախատեսված է հանրակրթական դպրոցի առաջին դասարանի համար:Այն պետք է համապատասխան լինի «Կերպարվեստ» առարկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկի առաջին դասարանի համար նախատեսված ծրագրային նյութը: Պետք է հիմք նախապատրաստի տարրական դպրոցի մյուս դասարանների «Կերպարվեստ» առարկայի լիարժեք ուսուցման համար:<br><u>Տեխնիկական չափանիշները</u><br>Էջերի քանակը՝ 32<br>Չափսը՝ 20X29 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 100 գ/մ2<br>Կազմի՝ օֆսեթ 100 գ/մ2<br>Կարելու ձևը՝ մետաղական | հատ | 38976 | 820 | 31960320 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |
| 8 | 22111110-31 | Դասագիրք «Կերպարվեստ 3» | «Զանգակ-97» ՍՊԸ, ՀՀ | «Կերպարվեստ 3»՝ 3-րդ դասարանի դասագիրք,<br>հեղ.՝ Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան<br><u>Բովանդակային չափանիշներ</u><br>Դասագիրք հանրակրթական դպրոցի երրորդ դասարանի համար: Պետք է համապատասխան լինի «Կերպարվեստ» առարկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկի երրորդ դասարանի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է երկրորդ դասարանի «Կերպարվեստ-2» դասագրքի և հիմք է նախապատրաստում չորրորդ դասարանում առարկայի լիարժեք ուսուցման համար:<br><u>Տեխնիկական չափանիշները</u><br>Էջերի քանակը՝ 64<br>Չափսը՝ 17X24 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2<br>Կազմը՝ ֆուտբորդ 270 գ/մ2<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | հատ | 14005 | 1350 | 18906750 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |
| 9 | 22111110-55 | Դասագիրք «Կերպարվեստ 4» | «Զանգակ-97» ՍՊԸ, ՀՀ | «Կերպարվեստ 4»՝ 4-րդ դասարանի դասագիրք,<br>հեղ.՝ Լեմս Ներսիսյան, Սուրեն Ներսիսյան<br><u>Բովանդակային չափանիշներ</u><br>Դասագիրք հանրակրթական դպրոցի չորրորդ դասարանի համար: | հատ | 13183 | 1500 | 19774500 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Համապատասխանում է «Կերպարվեստ» առարկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է չորրորդ դասարանի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է երրորդ դասարանի «Կերպարվեստ» դասագրքի<br>Տեխնիկական չափանիշները<br>Էջերի քանակը՝ 80<br>Չափսը՝ 17X24 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2<br>Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | | | | | |
| 10 | 22111110-30 | Դասագիրք «Երաժշտություն 3» | «Զանգակ-97» ՍՊԸ, ՀՀ | «Երաժշտություն 3»՝ 3-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Յուրի Յուզբաշյան, Ալինա Փահլևանյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրք հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի համար: Համապատասխանում է«Երաժշտություն» առարկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է 3-րդ դասարանի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է 2-րդ դասարանի «Երաժշտություն» դասագրքի և հիմք է չորրորդ դասարանի է«Երաժշտություն» առարկայի լիարժեք ուսուցման համար:<br>Տեխնիկական չափանիշները<br>Էջերի քանակը՝ 96<br>Չափսը՝ 17X24 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆեթ 70 գ/մ2<br>Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | հատ | 36594 | 1450 | 53061300 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |

**1-10- րդ չափաբաժինների համար**

**Ելքային տեղեկություններ՝** Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

**Հատուկ նշագրում՝** դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը,

Դասագրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից **բաշխման ցուցակի**:

Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** **ԿԱՏԱՐՈՂ**

---------------- Վ. Մուրադյան ---------------- Ս. Մկրտչյան

# ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

| Չափաբաժին | Անվանումը | Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն | Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Վայոց_Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | ԿԳՆ ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններ* | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | Դասագիրք-տետր «Մաթեմատիկա 1», 1-ին մաս | 11400 | 1642 | 3380 | 2370 | 1810 | 3726 | 2659 | 3759 | 3530 | 650 | 1649 | 927 | 37502 |
| 2 | Դասագիրք «Մաթեմատիկա 1», 2-րդ մաս | 4908 | 1096 | 750 | 1420 | 1306 | 1911 | 1643 | 1266 | 2416 | 350 | 1166 | 778 | 19010 |
| 3 | Դասագիրք «Մաթեմատիկա 2», 1-ին մաս | 5899 | 962 | 1956 | 1060 | 1154 | 1545 | 1404 | 2037 | 2000 | 470 | 1159 | 714 | 20360 |
| 4 | Դասագիրք «Մաթեմատիկա 2», 2-րդ մաս | 5899 | 962 | 1956 | 1060 | 1154 | 1545 | 1404 | 2037 | 2000 | 470 | 1159 | 714 | 20360 |
| 5 | Դասագիրք «Մաթեմատիկա 4», 1-ին մաս | 6806 | 903 | 2034 | 1200 | 1240 | 1866 | 1820 | 1440 | 2210 | 485 | 957 | 643 | 21604 |
| 6 | Դասագիրք «Մաթեմատիկա 4», 2-րդ մաս | 6806 | 903 | 2034 | 1200 | 1240 | 1866 | 1820 | 1440 | 2210 | 485 | 957 | 643 | 21604 |
| 7 | «Կերպարվեստ 1» /աշխատանքային տետր/ | 11698 | 1666 | 3100 | 3150 | 1860 | 3747 | 2952 | 3759 | 3787 | 650 | 1704 | 903 | 38976 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | |
| 8 | Դասագիրք «Կերպարվեստ 3» | 4291 | 373 | 2083 | 700 | 1155 | 1344 | 1066 | 1278 | 320 | 240 | 862 | 293 | 14005 |
| 9 | Դասագիրք «Կերպարվեստ 4» | 3949 | 458 | 1968 | 830 | 1006 | 1063 | 1089 | 1119 | 472 | 295 | 679 | 255 | 13183 |
| 10 | Դասագիրք «Երաժշտություն 3» | 11356 | 1542 | 3180 | 3000 | 1600 | 3256 | 2971 | 3428 | 3604 | 530 | 1523 | 604 | 36594 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 73012 | 10507 | 22441 | 15990 | 13525 | 21869 | 18828 | 21563 | 22549 | 4625 | 11815 | 6474 | 243198 |

* ՀՀ ԿԳՆ ենթակա ուսումնական հաստատությունների դասագրքերը հանձնվում են Երևանի թիվ 112 ավագ դպրոց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------------Ա. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

---------------Ս. Մկրտչյան

*Հավելված N 2*
*«14» 06 2019թ. կնքված*
*ՀՀԿԳՆՄԱԱՊՁԲ-19/25 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին, 100% կանխավճարի ձևով, ըստ ամիսների, այդ թվում. | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Դեկտեմբեր /մինչև 20-ը/ | Ընդամենը |
| 1 | 22111110-7 | Դասագիրք-տետր «Մաթեմատիկա 1», 1-ին մաս | - | - | - | - | - | 29581000 | 51002720 | 51002720 | 51002720 | 51002720 | 51002720 | 51002720 | 51002720 |
| 2 | 22111110-9 | Դասագիրք «Մաթեմատիկա 1», 2-րդ մաս | - | - | - | - | - | 13948000 | 24047650 | 24047650 | 24047650 | 24047650 | 24047650 | 24047650 | 24047650 |
| 3 | 22111110-16 | Դասագիրք «Մաթեմատիկա 2», 1-ին մաս | - | - | - | - | - | 9329000 | 16084400 | 16084400 | 16084400 | 16084400 | 16084400 | 16084400 | 16084400 |
| 4 | 22111110-18 | Դասագիրք «Մաթեմատիկա 2», 2-րդ մաս | - | - | - | - | - | 10155000 | 17509600 | 17509600 | 17509600 | 17509600 | 17509600 | 17509600 | 17509600 |
| 5 | 22111110-39 | Դասագիրք «Մաթեմատիկա 4», 1-ին մաս | - | - | - | - | - | 10776000 | 18579440 | 18579440 | 18579440 | 18579440 | 18579440 | 18579440 | 18579440 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 22111110-41 | Դասագիրք «Մաթեմատիկա 4», 2-րդ մաս | - | - | - | - | - | 9899000 | 17067160 | 17067160 | 17067160 | 17067160 | 17067160 | 17067160 |
| 7 | 22111110-10 | «Կերպարվեստ 1» /աշխատանքային տետր/ | - | - | - | - | - | 18537000 | 31960320 | 31960320 | 31960320 | 31960320 | 31960320 | 31960320 |
| 8 | 22111110-31 | Դասագիրք «Կերպարվեստ 3» | - | - | - | - | - | 10966000 | 18906750 | 18906750 | 18906750 | 18906750 | 18906750 | 18906750 |
| 9 | 22111110-55 | Դասագիրք «Կերպարվեստ 4» | - | - | - | - | - | 11469000 | 19774500 | 19774500 | 19774500 | 19774500 | 19774500 | 19774500 |
| 10 | 22111110-30 | Դասագիրք «Երաժշտություն 3» | - | - | - | - | - | 30775000 | 53061300 | 53061300 | 53061300 | 53061300 | 53061300 | 53061300 |
| **Ը Ն Դ Ա Մ ԵՆ Ը** | | | | | | | | **155435000** | **267993840** | **267993840** | **267993840** | **267993840** | **267993840** | **267993840** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

------------------- Ա. Մուրադյան

**ԿԱՏԱՐՈՂ**

------------------- Ս. Մկրտչյան